տէր Յակոբին, ընդհանուր ամենայն Հայաստան ազգիս։ Եւ յարհիական եպիսկոպոսութեան տէր Գրիգորի՝ յայսմ նահանգիս. ամենայն հիւսիսական կողմանցս վերադիտողի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս ի ճանապարհին Երուսաղեմայ, և եթող մեզ սուգ մեծ, և տրտմութիւն անմխիթար՝ որ և անտէրունչ մնալով մեր՝ ոչ գիտեմք զառաջիկայն թէ զինչ լինելոց է»։ (Լուսաց 1902, էջ 211)։

Բայց որովհետեւ յիշատակարանը որոշ թուական չունի կարելի չեղաւ ճշդել՝ թէ կաթոյի առաջնորդ Գրիգոր եպս.ի Երուսաղէմ գալը Զուղայեցի Յակոբ կթղ.ին (1655—1680) թէ Յակոբ Ե. Շամախեցիի օրով (1759—1763) տեղի ունեցած է։

ԳՐԻԳՈՐ ԿՐՕՆԱՒՈՐ.— Մբ. Որդի Սարգսի և Ուփայի ՋԻՐ (=1479) թուին Ս. Փրկչի վանքին մէջ կ'ընդօրինակէ Աղօթամատոյց մը։ Օրինակը չնորհողն էր Առաքել Ճգնաւոր, որ Թումայ վրդ.ին օրինակէն գրած էր։ Այս ձեռագիրը կը գտնուէր Պարտիզակի եկեղեցիին մէջ։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻ.— (Տե՛ս էջ 100). 1702ին իր ծախքովը կը շինէ խուց մը Ս. Յակոբի տաճարին մօտ յարկաբաժինի մը մէջ և կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Յիշատակ է խուցս Համթեցի Տէր Գրիգոր վրդ.ին։ Եւ իւր ծնողացն։ Ապտին։ Եւ վարախին ի ՌՃԾԴ (=1704)։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԿՈՒՄՆՑԻ?.— Մբ. Ժէ. դարու Երուսաղէմ ընդօրինակուած Մատթեոս Ուռհայեցի գիրքին վերջը գրած է վասն հերետիկոսութեան զոր «Թարց հրամանի ոչ ընթերցցի»։ Այս ձեռագիրը այժմ կը գտնուի Հռոմի մէջ։

Դ

ԴԱՒԻԹ ԵՊՍ.— Շամքոռու ձորէն էր և Ղարամանենց կոչուած իշխանական ցեղէն, հիմնարկած է Զարէքի անապատը (Գանձակ). և հոն հաստատած է միաբանութիւն մը. յիշեալը ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը։ 1730ին Լեզկիները կը յարձակին այս անապատին վրայ, կը կողոպտեն զայն եւ կ'սպաննեն միաբանները։ Կարապետ կթղ. Ուլնեցին եւ Գրիգոր պատրիարք Շղթայակիր Զարէքի առաջ-